

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Վ. ՏԻՐՎԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՄ

1924

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ—ՊՈՍԹԸՆ

347.6

S-66

347.6
Տ-66

ՎԱՐԴԱՆ ՏԻՐԱՏ

413
MAR 2010

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՄ



ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ
ՊՈՍԹԸՆ
1924

23 AUG. 2013

38. Oct

20Ն

ՅՄԱՀ՝ ԱՆԲԱԺԱՆ ԱՊՐՈՂ ԶՈՅԳԻՆ



20666-59

ԱՄՆԵ ԻՐԱՒՈՒՆԻՔ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԻ Ե ԷՆԴԻՆԱԿԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Շատեր կ'ամուսնանան, շատեր կ'ամուսնաթողուին, բայց քիչեր են ցմահ անբաժան ապրողները:

Շատեր են ամուսնութեան լուսապսակը իրենց ճակտին կրող կամաւորները, սակայն շատ քիչեր են այդ լուսապսակի աստղէն սնանողները: Եւ այդ իսկ պատճառաւ հարկ է չեչտել ամուսնութեան սիրահար երիտասարդի նկարագրին վրայ եւ կոչում ընել, որ անիկա իր անհատական եւ ցեղային անձման մաքրութիւնը իրեն իտէալ ընէ եւ այնպէս մօտենայ ամուսնութեան: Եւ եթէ ամուսնացած է՝ դարձեալ նկատի ունենայ իր անհատական եւ ընտանեկան շահերն ու սրբութիւնները, որովհետեւ օրէնքը շատ որոշ պայմաններ կը ներկայացնէ, սահմաններ կը դժէ, ուրկէ ըստ հաճոյս կարելի չէ անցնիլ ու դառնալ առանց հանրային շահին դէմ մեղանչելու եւ օրինական հետապնդութեանց ենթարկուելու:

Ո՞վ, ե՞րբ եւ ի՞նչպէս պէտք է ամուսնանալ եւ (ամուսնաթողուիլ): Ահա հարցեր որոնցմէ ամէն մէկը ունի իր յատուկ ելքը եւ փորձաքարը:

ԷՆԴԻՆԱԿ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՄ

Յաճախ զգալով մարդկային ընկերութեան կազմին եւ անոր սրբութեան սպառնացող արարքներու հոգեբանութիւնը, նախընտրած ենք լռել, կարծելով որ ընտանեկան յարկի ցաւալի երեւոյթներուն վրայ խօսիլը տեսակ մը անհամեստութիւն է եւ կրնայ հրապարակային արտայայտութիւն մը վատ տպաւորութիւն ձգել հանրութեան բարոյականին վրայ:

Ազգ եւ ընտանիք իրարու շողկապող օղակը արդարեւ այնքան կենսական նշանակութիւն ունեցող հարց մըն է, ու այնքան բարդ միանգամայն որ անկարելի է չ'անդրադառնալ անոր եւ մեր ամենէն խորունկ ուշադրութեան առարկան չի դարձնել:

Մանաւանդ որ ամերիկահայ բարքերուն մէջ սկսած է հիւանդութեան մը պէս տարածուիլ ամուսնաթողութիւնը, ու այսօր մենք առանց չափազանցութեան կրնանք ըսել որ ամուսնացողներու թիւը ամուսնալուծուողներու (divorcer) թիւին հետ զուգահեռաբար կ'ընթանայ: Ասիկա մեր ազգային բարոյականին եւ առաքինութեան դէմ նախատինք մըն է, եւ մեր բարգաւաճման ճնշիչ շղթայ մը, արատ մը սպաղայ սերունդի ազնուացման:

Շատ պարզ է որ կեանքը չէ կարելի ապրիլ առանձինն եւ միայնակ, որովհետեւ մենք անցեալէն կուգանք, տեսակ մը ժառանգորդներ՝ որ սպաղան կը պահենք մեր մէջ, ուստի պարտաւոր ենք արժեցնել այն հանգամանքները զորս բնութիւնը կուտայ բանական էակներուն:

Կենսաւորելու բնազդը մարդունն է եւ բոլոր գործաբանաւորներունը՝ որոնք կ'ապրին, կը շնչեն եւ կը մեռնին: Ուրեմն այս նուիրական բնազդը ըլլալով մեզի տրուած նրէք մը՝ պէտք է ցեղը սպրեցնելու ծառայեն եւ ո՛չ թէ զայն մահուան դատապարտելու: Մեր բողձանքն ու կոչումը պէտք է ըլլայ ո՛չ թէ դատապարտեալներու ստորին նկուղները ապրիլ, այլ բարձրէն սլանալ, կեանքի ազնիւ եւ դեղեցիկ բնազդներուն հետ ապրիլ եւ ջանալ որ անոնք մշտընջենաւորուին սերունդէ սերունդ:

Արդ մենք ցեղի մը կը պատկանինք որ կը պարծի իր պատմական առաքինութիւններով, ցեղ մը որ աճեցաւ, մեծցաւ ընդարձակ տարածութեան մը վրայ, տարիներու փորձառութիւններն ու բռնութիւնները դաստիարակեցին զինք եւ զօրաւոր նկարագիր շինեցին անոր մէջ՝ տոկալու, զիմազդելու եւ յաղթելու առաքինութիւններով:

Հայ ընտանեկան յարկը դարերով պահեց իր սրբազան աւանդութիւնները եւ անոնցմով միշտ մնաց բարձրագոյն մակարդակի մը վրայ, հայ կիներն ու ամուսինը ծնունդ տըւին լաւագոյն եւ ուշիմ սերունդներու, հայ երիտասարդըն ու օրիորդը ժառանգեցին Ֆիդիբական եւ հոգեկան ջընաղ գեղեցկութիւններ եւ ամբողջ սերունդը փրկուեցաւ այսպէս անկումներէ եւ այլասեռումէ:

Ուրեմն ներկայ սերունդին, գիտակից եւ հեռատես մըտաւորականութեան կը մնայ որ լրջօրէն նկատի առնէ մեր ընտանեկան կառուցուածքին սպաննացող վտանգը եւ զայն չքացնէ, հեռացնէ մեր ընտանեկան եւ ընկերային միջավայրէն որ սկսած է օտարամուտ սովորութիւններու տգեղութիւններով վտանգուել:

Ամէն երկրի օրէնքը շատ պարզ է եւ ամէն մարդու ազանջին կը խօսի յստակ կերպով, թէ՛ ամուսնութենէ առաջ հարկ է շրջահայեաց ըլլալ եւ զայն նկատել սրբութիւն մը, ու քայլ մը առնել յետոյ պէտք է գիտնալ անոր կենսական նշանակութիւնը թէ՛ անհատական եւ թէ՛ ազգային կեանքի տեսակէտէն:

Ամուսնութիւնը պարտականութիւն մըն է, պէտք է այդ պարտականութիւնը տանիլ զիտակցօրէն եւ երկիւղածութեամբ:

Ամուսնաթողութիւնը ընկերային չարիք մըն է, վէրք մը, քաղցկեղ մը որ ազգի մը սրտին վրայ երբ անգամ մը հաստատուի, անոր գերեզմանը կը փորէ: Անհատներ՝ որ փոքր եւ չնչին պատճառներով եւ իրենց անձնական հանգրստութիւնը նկատի ունենալով կը քանդեն իրենց ամուսնական յարկը, անոնք դորձած կ'ըլլան երկու ռեիք, նախ կը խաթարեն իրենց անհատական վարկն ու բարոյականը, եւ յետոյ ընկերութեան վրայ կ'աւելցնեն չարիք մը, բեռ մը աւելրիչ հիւանդութեան մը մանրէն:

Իժբախտաբար այս երկրին մէջ ամուսնութիւնը իր նըւերական բարձրութեան վրայ ճանաչուած չէ Հայերուս

կողմէն. մենք միշտ տարուած ենք տգեղ բարբերք տեսնելու, եւ նկատելու թէ՛ մարդիկ իրենց առանձնաշնորհումները, ազատութիւնը ունին եւ կրնան ուզած ատեն ամուսնանալ եւ ուզած ատեն զատուիլ:

Անտարակոյս որ այս երկրին բարձրագոյն եւ իտէալ կեանքը կայ որուն մէջ ամուսնութիւնները եթէ քիչ մը դըժբախտ ալ ըլլան՝ տակաւին կը մնան իրենց նուիրական եւ ազնիւ բարձրութեանը վրայ:

Ասիկէ գատ օրէնքը շատ որոշ սլայմաններ կը ներկայացնէ, սահմաններ կը դժէ, ուրկէ բստ հաճոյս կարելի չէ անցնիլ ու դառնալ առանց հանրային շահին դէմ մեղանշելու եւ օրինական հետապնդութեանց ենթարկուելու:

Օրէնքի այս տրամադրութիւններուն անցնելէ առաջ հարկ է շեշտել հայ երիտասարդի նկարագրին վրայ եւ կոչում ընել որ անիկա իր անհատական եւ ցեղային աննման մաքրութիւնը իրեն իտէալ ընէ եւ այնպէս մօտենայ ամուսնութեան: Եւ եթէ ամուսնացած է՝ դարձեալ նկատի ունենայ իր անհատական, ընտանեկան եւ ազգային շահերն ու սրբութիւնները ու այնպէս տայ իր որոշումները:

Ամուսնալուծման թեթեւ քայլ մը ընտանիքներ քանդած, անձերու ապագան ոչնչացուցած եւ մեծ աւերներ տուած է ընկերային կեանքին, ասոր համար շատ աւելի համբերատար, գոհունակ եւ ամուսնական կեանքը դրախտի մը վերածելու աշխատելու է փոխանակ անկէ շուտով փախչելու եւ ընկերութեան վրայ նոր դժբախտութիւն մը յառաջացնելու:

Լաւէն դէպի չարը, գեղեցկութենէն դէպի տգեղութիւն, ճշմարտութենէն դէպի խարկանք երթալ անհատապէս եւ ազգովին կործանման երթալ պիտի նշանակէր:

Եթէ մարդկութիւնը տիեզերքի բարոյական կորիզն է, մարդ անհատը ազգի մը կարելիութեանց սաղմն է, ուրեմն մեր բարոյականին որակը, նկարագրին մաքրութիւնը, ընտանեկան սրբութիւնը պէտք է ըլլայ մեր է՛ն նուիրական սկզբունքներէն մին, մեր դաւանանքը:

Այս բարոյական տեսակէտը ցոյց տալով՝ պիտի անցնինք բուն օրէնքին, որով մարդկային ընկերութիւնը կը դեկավարուի:

Հարկ է շեշտել որ քաղաքակրթութեան ոգիին եւ յառաջդիմութեան պայմաններուն համեմատ ամուսնութիւնը

պէտք է նկատուի վսեմ ու հոյակապ ընկերակցութիւն մը եւ ոչ թէ խարկանք կամ առանձնաշնորհում:

Մարդկային քաղաքակրթութեան իտէալական բարձրութեան վրայ սէրը պէտք է մնայ ամուսնութեան հիմնաքարը, եւ ամուսնութիւնը ընտանեկան կեանքի եւ ազգային վերականգնումի նախերգանքը: Ընտանիքի մը կործանման տարրերը սոսկ սիրոյ բացակայութիւնն է ուրկէ կը ծնի ամուսնալուծութիւնը: Ներկայ ընտանեկան կեանքի մէկ տխուր պատկերը:

Սովորական օրինակներ ու անձնական փորձառութիւններ ինծի թոյլ կուտան ըսելու թէ այսօր ամուսնութիւնը գլխաւորապէս հիմնուած է (նամանաւանդ Ամերիկահայութեան մէջ), ոչ թէ սիրոյ վրայ, այլ նիւթական առաւելութիւններու, գրամի, հարստութեան, զիրքի, պատուանշանի եւ ընկերական այլ եւ այլ պայմաններու վրայ: Ու երբ այս անհամեմատ խորտ ու բորտ գիրքերու եւ տարիքներու ամուսնութիւնները՝ բացի սիրոյ, ամէն նկատումներու վրայ կը հաստատուին այդ պատճառ կը դառնայ արտաթէտ մասերը կաղմելու բռնադատեալ ամուրիութեան ինչպէս նաեւ ամուսնալուծութեան:

Ինչպէս կանխաւ յիշեցուցի, թէ ամուսնութեան հոգեբանութիւնը տակաւին խակ է ամուսնացողներու պսակին տակ եւ մինչեւ անգամ փորձեր իսկ կը խնայուին հասկնալու իր բառացի թարգմանութեան իմաստը:

S. Վէպսթրի մեծ բառարանը այսպէս կը սահմանէ ամուսնութիւնը — **Marriage**: The act of marrying, or uniting a man and a woman for life as husband and wife . . . Եւ ուրեմն ինչո՞ւ ամուսնական օտնջութիւնը երկրային կանոններէն եւ օրէնքներէն ամենէն ազդու եւ ամենէն սուրբը չնկատուէր ու ամուսնացած անձնաւորութիւն մը պէտքը չզգար աշխատիլ պահելու անոր անարատութիւնը անբիծ մակարդակի մը վրայ:

Որպէս իրաւաբանական ուսանող հաստատապէս կը հաւատամ որ ամուսնութիւնը միջոց եւ կամ ծանրաբեռ խնդիր մըն է, որը կը վերաբերի ոչ միայն մէկ մարդու ու մէկ կնոջ, որոնք կը պայմանագրուին որպէս կին ու էրիկ, այլ այդ կը վերաբերի ընդհանրութեան ու խզումը այսպիսի պայմանագրութեան մը կը նշանակէ օրինագանցութիւն եւ վստահութեան զեղծում ի հեճուկս տէրութեան իշխող օրէնքին եւ

մարդկային ընկերակցութեան: Այս ըսելու ենք մեր ազնիւ ցեղին սիրուն ու իր ծագման դաւանանքի պայծառ եւ շէնչող յողթանակին համար: Ու եթէ զլանանք այսպիսի բացարձակ ճշմարտութիւն մը մատնանշելու այն ժամանակ ազգային բարոյականութեան յառաջդիմական հոսանքները անձկութեան եւ անստուգութեան արիքներուն զարնուելով տմոյն ու աղօտ հորիզոնները պիտի յառաջանան՝ փոխան բազմաթիւ զրկանքներու, մաքառումներու ճամբաներ կտրած անցնելու ճշմարիտ ընտանեկան եւ արժանաչարգ կենակցութեանէն զէպի ճշմարիտ տան եւ իտէալական ընտանիքին, ազատելու համար ներկայ ընկերութիւնը իր գահավէժ ու զետնաքարչ անկումէն ուր ընտանեկան կեանքը երկար ըլլայ, ուրախութիւնը խորանայ եւ ամուսնալուծութիւնը վերջ մը դտնէ չի վերաւորելու համար բարոյականութեան էն զգայուն եւ ամօթխած զգացումները:

Եթէ չենք կարող ամուսնացողները առաքինասէր ու երջանիկ դարձնել, սակայն պէտք է ընել այն ինչ որ կարող ենք մեր կրօնական հեղինակութեամբ ու քաղաքական օրէնքի լիազօրութիւնով: Կարելի է գտնել ուրիշ կեանք մը որ աւելի արժէքաւոր դառնայ քան ամուսնութիւնը, սակայն ոչինչ է ամուսնութիւն, որը ընկերակցութիւն մըն է ապրելու միասին ցմահ՝ ունենալով հաւատք, սէր ու զոհողութիւն իրենց ընկերակցութեան մէջ: Ամուսնացողներու համար այս է կենաց զարուներ ու այս ալ պէտք է ըլլայ զարնան զեփիւսը նախ քան զերեզման երթալէ: Ուրեմն, ինչպէ՞ս կարող պիտի ըլլանք վերլուծել ամուսնութիւնը կրօնական ինչպէս նաեւ քաղաքական հողի վրայ:

Ամուսնութիւնը կարող է սահմանուիլ որպէս հաւաստի գործ մը, ծէս եւ կամ եղանակ մը որորնցմով կազմուած է կնօջ եւ էրկայ քաղաքական ընկերակցութիւնը: Ու այս ընկերակցութիւնը սոսկ պայմանագրութիւն մըն է կամ ոչ, ու եթէ է, պայմանագրութիւններու ո՞ր դասակարգին կը պատկանի, հարցեր են ասոնք որոնց մասին արդէն շատ անգամներ խօսուած է եւ կարիք չկայ այդ ուղղութեամբ լուսարանութիւններ ընել, այլ միակ ու ամենակարեւոր կէտը օրինական ամուսնութեան մը հիմը եւ կամ շողկապող օղակին հաստատութիւնը երաշխաւորելու համար ընդհանրապէս ընդունուած է ամուսնացող տարրերու երկուստէք փոխադարձ հաճութիւնը, իսկ մնացած յարակից տարրերու կարգադր-

բող ուժն է օրէնքի բացարձակ տնօրինութիւնը: Միացեալ Նահանգաց մէջ որոշապէս վճռուած է թէ ամուսնութիւնը սահմանադրական օրէնքի խմատով պայմանագրութիւն մը է, որը կարգիլէ նահանգային օրինադրութիւնները՝ վատթարացնելով պայմանագրութիւններու պարտականութիւնը:

Փոխադարձ հաւանութիւնը, ինչպէս ամէն տեսակ պայմանագրութիւններու մէջ, պայմանագրուողները իրարու քով կը բերէ ցոյց տալով մէկըմէկու հանդէպ ունեցած պարտականութիւնները, սակայն փոխադարձ հաւանութիւնը անկարող է բաժնել զանոնք, այլ մահուան սեւ ճիրանն է որ միայն կրնայ քակել այդ հանդոյցը — մինչեւ որ օրէնադիր իշխանութիւնը իրաւարար լիազօրութեամբ մը հասարակական օգտին համար միջամուխ լինի հոշակելով վաւերական ամուսնաթղղութիւն մը արդար հողի վրայ: Ու օրէնքին այս միջամտութիւնը ներելի է այն ժամանակ երբ ամուսնացած զուգէն մէկը իր անբարոյական առաջնորդութեամբ անարժան վարմունք կուեննայ իր հետ պայմանագրուող սրտակիցին հանդէպ, ու կը վիրաւորէ հասարակութեան անդորրութիւնը:

Ամուսնութեան քոյին տակ անհաւատարիմ կենակցութիւնները, որոնք ընտանիք անուներ կրելէ իսկ շատ հեռու են, սակայն օրէնքը այս դատակարգի ամուսնութիւնները անզամ անվաւեր չի նկատեր երբ իրենց մէջ տակաւին կը միայն համեստութեան արժէքը ու փոխան ամուսնալուծութեան կը տոկան կեանքի բեռան տակ լուիկ ու մնջիկ: Օրէնքը իր մաքրագործ սուրբ կիջնցնէ բաժնելու զանոնք մէկըմէկէ այն պարագային միայն երբ այդ ամուսնութեան կաւարիչը մէկ կողմ կը գլորուի եւ որպէսզի ներութեան գոլորշիները պլտոյտ չտան սեւէ պարկեշտ ընտանիքի եւ կամ համայնաւեր ու համայնական քայքայում չի պատճառեն ընկերութեան բարոյականին, պաշտօնական ամուսնալուծութիւնը կը դառնայ միակ դարմանը օրէնքի լիազօրութեամբ:

Ըստ հին օրէնքի տրամադրութեան ամուսնութիւն մը անվաւեր կը նկատուէր երբ ան հիմնուած էր քաղաքական անկարողութիւններու վրայ, ինչպէս տրամարութեան ու նենգութեան, իսկ կանոնական խարկանքն էր համարինութիւնը (consanguinity) ինչպէս նաև անկարողութիւնը, որոնք ամուսնութիւն մը ոչ թէ անվաւեր այլ եղծելի միայն կը դարձնէին: Օրէնսդրական իշխանութիւնը եւ կամ լե-

նիսլէգիլըրը այս վերոյիշեալ պակասութիւններուն վրայ հիմնուած ամուսնութիւնը բացարձակ անվաւեր չի նկատեր, այլ կարելի է անվաւեր դառնայ անհարազատ զգայութեան բազմաթիւ եւ բազմազան պատճառարանութեամբ:

Եթէ ամուսնութեան նպատակը չպիտի ըլլայ փոխադարձ երախտագիտութիւն ու հաճելի առաւելութիւն կնոջ եւ էրկայ միջեւ, շատ դժուար է երեւակայել թէ անոնց բաժանումը պիտի ըլլայ գերեզմանը եւ ոչ թէ ամուսնաթղղութիւնը:

Բարոյագիտութեան դասական ուսուցիչ տիեզերահրօշակ Լիքի իր «Բարոյագիտութիւն» գրքին մէջ ամուսնաթողութեան այս ցաւոտ հարցի մասին կըսէ. «Ծագում առած է ընկերութեան մէջ երեւոյթ մը որ արդարեւ ամենէն սգաւորն է, եւ շատ պարագաներու տակ ամենէն ահաւորը, որուն վրայ բարոյագէտին աչքը կանգ կառնէ: Այդ ապերջանիկ էակը, որուն անուներ ամօթ է ըսել, որ կը կեղծէ ցուրտ սրտով մը սիրոյ վաճառումը, որ զինք կը յանձնէ տոբանքի իբրեւ կրքաւորական գործիք կ'արհամարուի, կ'անարգուի իբրեւ իր սեռին ամենէն ինկածը, որ ճակատագրուած է զխաւորապէս հիւանդութեանց, գետնաքար թշուառութեանց եւ կանխահաս մահուան, եւ ամէն դարու մէջ կը ճանչցուի մարդուն մեղքին եւ այլասեռման յաւիտենական խորհրդանշանը»:

Եթէ ամուսնութեան սիրահարները հասկնան ընտանեկան հարկի փափկութիւնը, այն ժամանակ եւ ոչ մէկ մեղք եւ ոչ այ ուրեւ ապերախտութիւն կարող պիտի ըլլայ խլել զայն իրենցմէ, մինչեւ իսկ եթէ դահիճով պատրաստուած կարմիր մահիճը իրենց յաւիտենական գերեզմանը դառնայ:

Վաւերական ամուսնութեան մը էական տարրերը ինչպէս լեհիսլէգիլըրը դասաւորած է ամէն մէկը իր կարգին՝ հետեւեալներն են.

- Ա. Անհամարիւնութիւն
- Բ. Քաղաքական գիրքի յարմարութիւն
- Գ. Մտային կարողութիւն
- Դ. Ֆիզիքական կարողութիւն
- Ե. Տարիքի չափաւորութիւն
- Զ. Նախկին ամուսնութեան օրինական լուծում

Է. Բռնի ոյժի, խարկանքի բացարձակ բացակայութիւն
Ը. Ծնողաց հաւանութիւն, որը մեծ տեղ մը չի բռներ

Ամերիկայի մէջ:

Այս վերոյիշեալ էական տարրերու ներկայութիւնը անհրաժեշտ նախադիտելիք մը պէտք է ըլլայ նախ բան պատկերաբարողութիւնը կատարուելէ եւ ո՛չ թէ վերջը, որպէսզի ամուսնութիւնը անվաւեր չնկատուի լեհիպոլիտի կողմէն անմիջական ամուսնաթողութեան մը դրուելով:

Ինչպէս շեշտեցինք վաւերական ամուսնութեան մը նախադիտելիքներու անհրաժեշտութիւնը եւ իր կարեւոր դերը բարոյականի տէր ընտանիքի մը կեանքին մէջ, սակայն շատ համառօտ անցանք մատնանշելով միայն էական տարրերը իրենց կարգին, որոնցմէ առաջին եւ ամենակարեւոր տեղը դրաւորն էր՝ Ա. Անհամար իւնութիւն:

Երկու համարին տարրերու մարդ եւ կնոջ ամուսնութեան արդիւնքը միշտ եղած է բացարձակ վատաստութիւն եւ խեղաբոլորութիւն: Ըստ անգլիական եկեղեցւոյ օրինաց, որը նաեւ ընդունուած է Միացեալ Նահանգաց մէջ, մարդ մը պէտք է ամուսնանայ իր՝

- 1. հորք մօր, 2. կնոջ մեծ մօր, 3. հորաքրոջ, 4. մօրաքրոջ,
- 5. մօրեղբոր կնոջ, 6. հօրեղբոր կնոջ, 7. կնոջ հորաքրոջ,
- 8. կնոջ մօրաքրոջ, 9. կնոջ մօր, 10 քոռան:

Իսկ կին մը պէտք է ամուսնանայ իր՝

- 1. հորք հօր, 2. մեծ մօր էրկան, 3. էրկան մեծ հօր,
- 4. հօրեղբոր, 5. մօրեղբոր, 6. մօրաքրոջ էրկան, 7. հորաքրոջ էրկան, 8. էրկան հօրեղբոր, 9. էրկան մօրեղբոր, 10. էրկան հօր:

Ահա տասը աստիճաններ որոնք պէտք է յարգուին ամէն մէկ ամուսնացող հարս ու փեսայի կողմէ, իրենց ֆիզիքական ինչպէս նաեւ ապագայ սերունդի փրկութեան սիրոյն:

Հայ կիին ու ամուսինը յարգելու են այս համարիւնութեան անհրաժեշտութիւնը, ծնունդ տալու լաւագոյն եւ ուշիմ սերունդներու: Հայ երիտասարդն ու օրիորդը պէտք է ժառանգեն ֆիզիքական եւ հոգեկան չքնաղ գեղեցկութիւններ, հեռու պահելու իրենց սերունդը այլաստուածէ եւ անկուսներէ:

Բ. Քաղաքական դիրքի յարմարութիւն

Քաղաքային դերքի յարմարութիւն ըսելով պէտք է հասկնալ ինչպէս ցեղի, դոյնի եւ ընկերային դիրքի: Մ. Նահանգաց մէջ ամուսնութիւն մը բացարձակապէս արգելուած է սեւամորթներու եւ ճերմակներու միջեւ, ինչպէս նաեւ ազատ մարդու մը ամուսնութիւնը գերիի մը հետ, որովհետեւ գերիներ կը ճանչցուին որպէս շարժական ինչք եւ շատ տրամաբանական է որ շարժական ինչքը եւ կամ առարկայ մը կարող չէ պայմանագրութիւն կնքել, ուրեմն գերի մը նաեւ չէ կարող ամուսնանալ:

Գ. Մտային կարողութիւն

Եւ ոչ մէկ մարդու պայմանագրութիւնը կարող է վաւերական նկատուել երբ պայմանագրուող մարդը չունի այն մտային կարողութիւնը հասկնալու թէ ինչու եւ ինչ բանի համար է որ կը պայմանագրուի: Սակայն ինչ աստիճան ըլլալու է մարդու մը մտային կարողութիւնը, այդ դժուար է սահմանել զրջով, այդ վիճելի հարց մըն է որ կատու ունի հանգամանքներու այլեւայլ մանրամասնութիւններէ: Օրինակի համար օրիորդ մը որ անփորձ է եւ անուս՝ այդ չի նշանակեր թէ անկարող է պայմանագրուել եւ կամ ամուսնանալ, եթէ այդպիսի օրէնք մը ըլլար, ուրեմն բոլոր տգէտներն ու անփորձները առանց ամուսնութեան գերեզման պիտի երթային: Մէկը որ բնաւորութեամբ ողջամիտ (sane) է սակայն պայմանագրուած պահուն խելագար (insane) եղած է, ըստ օրինաց այդ պայմանագրութիւնը չեղեալ կը նկատուի:

Գինեմոլ մը իր սթափած ժամանակին երբ կը կնքէ պայմանագրութիւն մը ամուսնանալու համար, երբ պայմանագրուողը իմանայ անոր գինեմոլ մը ըլլալը, կրնայ անմիջապէս չեղեալ նկատել այդ պայմանագրութիւնը:

Համր, խուլ եւ ոչ ալ կուրութիւնը զօրաւոր փաստեր կարող են նկատուել՝ երբ խարբրայական միջոցներ չեն դործածուած համր եւ կամ կոյր մարդու մը հետ պայմանագրութեան պահուն:

Դ. Ֆիզիքական կարողութիւն

Ֆիզիքական կարողութիւնը աւելի մեծ տեղ կը գրաւէ քան մտայինը. ուր կայ ֆիզիքական տկարութիւն՝ հոն կարելի չէ գտնել կատարեալ ամուսնութիւն: Այդ մասին կարիք չկայ երկար խօսելու, քանի որ բժիշկ մը աւելի լաւ կարող է փաստարանել քան իրաւաբանական ուսանող մը: Ուրեմն աւելի պատշաճ ու օգտակար պիտի ըլլար բժշկական քննութեան մը վերջ ամուսնանալ քան թէ իրաւաբանի մը թելադրութիւններուն ապաւինել:

Ե. Տարիքի չափաւորութիւն

Տարիքի չափաւորութիւն կը նշանակէ մէկը պէտք է 21 տարեկան ըլլայ որպէսզի իր պայմանագրութիւնը բացարձակ օրինական ճանչցուի համաձայն օրէնքի տրամադրութեան: Սակայն ամուսնութեան համար տարիքի աստիճանը բոլորովին կը տարբերի հասարակ պայմանագրութիւններէ որովհետեւ մէկը որ իր 13 տարիքին մէջ ամուսնացած է չէ կարող 21 տարիքին մէջ այդ ամուսնութիւնը չեղեալ համարել. բայց տարբեր եւ կամ առեւտրական պայմանագրութիւններու մէջ այդ կարելի է եւ օրէնքը թոյլ կուտայ որպէսզի 21 տարեկանէն վար պայմանագրուող մը անտեւս է իր պայմանագրութիւնը զօրաւոր, շատ զօրաւոր փաստունենալով մանկութիւնը, եւ այդ պատճառաւ օրէնքը ամուսնացողներու համար ունի մասնաւոր տարիքի շրջան մը որ կը կոչուի «հաւանութեան տարիք կամ շրջան»: Անգլիոյ մէջ 14 տղայոց իսկ 12 իգական սեռի: Սակայն Միացեալ Նահանգաց մէջ կը տարբերի այդ օրէնքը: Ամէն մէկ նահանգ ունի իր յատուկ օրէնքը, այն է 18-20 տղայոց իսկ 16-18 իգական սեռին:

Եթէ ամուսնութիւնը իրենց փոքր հասակին մէջ է եղած, կարելի է չեղեալ համարել, եւ կամ մէկը մեծ իսկ միւրը փոքր ամուսնացած են, կրկին կարելի է չեղեալ նկատել ունէ մէկին հաւանութեամբ: Եւ երբ հաւանութեան տարիքը կ'անցնին, անոնք այլեւս երկրորդ ամուսնութեան մը պէտքը չունին, այլ նախկին ամուսնութիւնը վաւերական

ու հաստատ կը նկատուի եթէ երկուստեք հաւանին թէ իրենք այր եւ կին են:

Զ. Օրինական լուծում նախկին ամուսնութեան

Եթէ ամուսնացած մէկը կ'ուզէ կրկին անգամ ամուսնանալ եւ տակաւին իր նախկին էրիկը եւ կամ կինը ողջ է եւ օրինաւորապէս բաժնուած չեն իրարմէ, երկրորդ ամուսնութիւն մը ոչ միայն անվաւեր է, այլ դատապարտելի, արժանի բանտարկութեան:

Քրիստոնէական եկեղեցին բնաւ թոյլ չի տար մէկու մը որպէսզի երկրորդ անգամ ամուսնանայ, հոգ չէ թէ ամուսինի մը երկար բացակայութիւնը միակ պատճառը նկատուի կրկնակի ամուսնութեան: Սակայն քաղաքային օրէնքը երկրորդ ամուսնութիւն մը վաւերական կը նկատէ այն ատեն միայն երբ առաջի ամուսնութիւնը օրինաւոր կերպով լուծուած է: Իսկ եթէ կինը եւ կամ էրիկը տունէն երկար ժամանակ բացակայ կը գտնուի, կինը կամ էրիկը կարող է ամուսնանալ միայն այն ժամանակ, երբ անիկա վստահ չի տէ թէ իր էրիկը կամ կինը մեռած եւ կամ անկարելի է վերադարձը, եթէ ոչ կինը պարտաւոր է եօթը երկար տարիներ սպասել նախ քան երկրորդ ամուսնութեան մը պատրաստուելէ:

Գալով այն Հայերուն, որոնք Ամերիկա կը գտնուին ու չեն գիտեր թէ իրենց կինը Հայաստանի մէջ սպանուած է կամ կորսուած, ոչ մէկ օրէնք թոյլ կուտայ անոնց որպէսզի կրկին ամուսնանան, քանի որ իրենց կնոջ մահուան կամ կորստեան զօրաւոր փաստեր չունին:

Է. Բռնի ոյժ

Ամուսնութիւն մը եթէ բռնի ոյժի տակ եղած է, ինչպէս Հայաստանի մէջ, ուր շատ մը հայ օրիորդներ բռնի ամուսնացած են թուրք ճիւղայններու հետ, այդպիսի ամուսնութիւն մը վաւերական չէ, եւ կամ աղջիկ մը ամուսնանայ տղուն բռնի ստիպումովը, ծանր տուգանքի եւ բանտարկութեան կը դատապարտուի: Ամուսնութիւն մը սրբալի, կեղծ ներկայացումներով, այրինքն տղան եւ կամ աղջիկը ինքզինք կը ներկայացնէ որպէս ճերմակամորթ սե-

րունդ սակայն իր իսկական սերունդը եղած է սեւամորթ, կրկին չեղեալ կը նկատուի: Բայց կան ամուսնութիւններ գրեթէ առանց բացառութեան, որոնք անվաւեր չեն նկատուիր եթէ սխալ կամ կեղծ ներկայացում ալ եղած է, օրինակ՝ ծնունդի, ընկերային դիրքի, որովհետեւ գիմացի անձը պատեհութիւն կարող է ունենալ հետամուտ ըլլալու ճշմարտութիւնն ստուգելու:

Ը. Ծնողաց հաւանութիւն,

որը մեծ տեղ մը չի բռներ Ամերիկայի մէջ Ծնողաց հաւանութեան մասին Ամերիկայի ամէն մէկ նահանգ իր յատուկ օրէնքը ունի, օրինակ՝ Բէնսէյս նահանգին մէջ ընաւ կարիք չկայ ծնողաց հաւանութեան:

Ըստ հոռոմէական օրէնքին՝ «կատարումը չի ներկայացընէր ամուսնութեան մը վաւերական ըլլալը, երբ հաւանութիւնը կը պակսի հոն»: Օրինակ՝ աղջիկ եւ տղայ կ'ապրին միասին որպէս այր եւ կին, սակայն կինը որ ընաւ հաճութիւն չէ տուած այդ մարդուն կին կոչուելու՝ ուրեմն ամուսնութիւնը անվաւեր եւ չեղեալ կը նկատուի եթէ օրէնքի դիմուի, որովհետեւ ուր չկայ հաւանութիւն՝ հոն չի կազմուիր պայմանագրութիւն: Փոխադարձ հաւանութիւնը անհրաժեշտ ու էական պայմանը կը կազմէ ունէ պայմանագրութեան: Փոխադարձ հաւանութիւն՝ այդ է կենսական հարցը եւ ուրիշ ոչինչ:

Երկու տեսակ հաւանութիւն կրնայ ըլլալ ամուսնութեան մը համար: Հաւանութիւն՝ կատարումով եւ կամ առանց կատարումի. հաւանութիւն՝ որ կը յաջորդէ կատարման:

Ահա թէ ուր կրնանք գտնել ամուսնութեան մը օրինաւորութիւնը, ըլլալ այդ քաղաքական եւ կամ բարոյական, որոնք զիրար լրացնող ազդակներ են այր եւ կին կոչուելու:

* * *

Մենք փորձեցինք ցոյց տալ ամուսնութեան մը էական ազդակները՝ ըստ քաղաքային ու (կրօնական) օրինաց, սակայն մեզ հետաքրքրող ամենակարեւոր ինդիքը ամուսնաթողութիւնն է, որովհետեւ անկէ կը ծնի ամէն չարիք

ու այդ է պատճառը ընտանիք ու ընկերութիւն քայքայող սեւ մթնոլորտին:

Ինչպէս իրերու խորհրդաւոր ընթացքը ու մարդկային զարգացման յեղաշրջումը թոյլ չտուին մեզ որ ըստ մեր նախկին գիտական փիլիսոփայութիւններով ցնորք նկատուինք կեանքը, նոյնպէս այ արդի ընտանեկան սրբութիւնը կ'արգիլէ մեզ որպէսզի ամուսնաթողութիւնը գնահատական քուէ շահի բարոյագէտներու ու իմաստասէրներու ուսումնասիրութեամբ նոյն իսկ հասարակ կեանքի սահմաններուն մէջ անդամ: Հիմա շատ լաւ հասկնալի եղած է թէ՛ ինչպէս կեանքը եղած է զօրաւոր հաստատութիւն մը որը տակալ դիտցեր է անտանելի դժուարութեանց ու անդիմադրելի յարձակումներու, յարմարցնելով ինքզինք պարագաներուն ամէն մէկ պատրուակին, ինչպէս նաեւ շատ մը տեսարաններու փոփոխութեանց, բայց միշտ մնալով անփոփոխ ինքն իր մէջ:

Անհատը կը մեռնի, բայց ցեղը կը մնայ անփոփոխ եւ կը շարունակէ իր փշալից ճամբան՝ անտեսելով ամէն տեսակ խոչընդոտ: Այս է եղած մարդ էակին տրամաբանական փափկութիւնը ու իր ցեղին հոգեկան առողջութիւնը:

Շատեր ամուսնութեան լուսապսակը իրենց ճակտին կրող կամաւորներ են, սակայն շատ քիչեր են այդ լուսապսակի աստղէն սնանողներ, որովհետեւ, ինչպէս կանխաւ ըսինք, առողջ գաղտնութիւն ու խորունկ տրամաբանութիւն չի գործածուիր վերլուծելու ամուսնութեան լուսաւոր բաքոյականին սրբազան վարդապետութիւնը: Առանց այս նուիրական պարտքի լիակատարութեան տիրանալու, ամուսնացող մարդու մը նկարագիրը շատ շուտ կը թառամի իր տգէտ վարմունքներուն պատճառաւ, եւ այսպէս մեռած նկարագրի մը ծրագիրը այլեւս անկարող կը դառնայ ցոյց տալու յաղթանակի սուրբ, միշտ բարձր պահելով առաքինութեան դրօշը, այսինքն Բարդուայականութիւնը:

Եւ ոչ մէկ լծակից զոյգ կարող է հարազատօրէն տանիլ ամուսնութեան շնորհապարտութիւնը, քանի անոնք չեն հասկցած թէ իրենք մէկ են հոգւով ու զոյգ են սրտով եւ այդպէս այ պիտի մնան մինչեւ մահ:

Ամերիկահայ գաղութին հարիւրին իննսուներ ինք քրիստոնէական եկեղեցիի մէջ ու քրիստոնէական ծէսով կը պսակուի, սակայն ինչո՞ւ

20666-59



վերջ անպարտաճանաչ կը գտնուին յարգելու այդ եկեղեցւոյ օրէնքը, ինչպէս նաեւ իրենց տուած երգումը թէ՛ «լաթ է գէշ, առածս առած է ու մահն է մեր վերջին բաժանումը»: Եթէ անոնք հանդիսապէս համաձայնին մնալ հաւատարիմ՝ յարգելով իրենց խոստումը, ամուսնաթողութեան դիւրութիւնները անարժէք կը մնան իրենց համար եւ անոնց հոգին ու պէտքերն իրենց կը մնան բաժնեզուրկ ամուսնալուծման կողմէն, մնալով թունդ հակառակորդներ ամերիկեան դատարանները պարարտացնող առատաձեռնութեանց: Այս ըսելով ես ինքզինքս բացարձակ հակառակորդ մը չեմ նկատեր ամուսնաթողութեան, որովհետեւ ես այն համոզուած եմ թէ «գայլ եւ գանուկ միասին չեն կարող ճաշակել» ինչպէս կ'ըսէ ժողովրդական առածը, սակայն ամուսնաթողութիւնը ամերիկահայութեան մէջ այն ծայրայեղութեան է դացեր որ երէկի ամուսնացող եթէ մէկ օր իր կնոջ աչքին մէջ ժպիտ չի տեսնէ եւ կամ սուրճը անգուշութեան մը պատճառաւ առանց շաքարի իր էրկան հրամցնէ, Աստուած իմ, այս պարագան որպէս անգթութեանց անգթութիւն նկատելով՝ ամուսնաթողութեան անմիջական պատրաստութիւններ կը տեսնուին, այն համոզումով թէ իր կինը այլեւ սիրելի չգիտեր եւ ուրեմն՝ ուր սէրը կը պակսի ամուսնաթողութիւնն է միտնել ելքը եւ ազատարար ոյժը: Եթէ դուն, ո՛վ ամուսնութեան սիրահար, եթէ կը ճանչնաս քու կինդ ու կը սիրես զայն՝ նաեւ այդ սիրոյ գիտակցութեան չափով պէտք է որ ըլլաս միքի ներողամիտ այդպիսի թեթեւ ու անմեղ յանցանքներուն, որովհետեւ մաքուր սէրը գործուած յանցանքէն բարձր ու պաշտելի է այր ու կին կոչուող զոյգի մը համար:

Ծնողք մը երբ յաճախակի ամուսնաթողութեան ու այլապիտակութեան վարժուած է, ան պիտի մտածէ օր մը թէ ինքն ալ պիտի դառնայ մայր եւ կամ հայր պատուաւոր դասակներու, անոնք պիտի ճանչնան ու հաւատարն իրենց դասակին գոյութեան այս վաղանցուկ աշխարհին մէջ, անոնք պիտի գիտակցեն արդեօք զո՞հել գիտնալու առաքինութեան, կըթելով իրենց ապագայ սերունդը առաքինի ու բարեպաշտ միտումներով:

Անկեղծ ծնողքի մը կեանքը լեցուն է ինքնագոհողութեան բարի սերմերով. անոր կեանքն է եղած պատուաւոր ու հաճելի՝ հասունցնելով արդիւնաբեր սերունդ մը աւելի

ազնիւ եւ բարեպաշտ՝ քան ինք իր կեանքի բովանդակութեամբ:

Կրնայ պատահիլ որ էրիկ մարդու մը դիրքը եւ կամ վարուելակերպը այն աստիճան ճիւղալ ու դազանային կը դառնայ որ արդարացնէ իր անմեղ կինը բաժանման պատրաստութիւններուն մէջ, սակայն մէկը որ ճամարտօրէն հասկցած է ամուսնութեան կատարեալ նպատակը ու ըմբռնած է անոր հոգեբանութիւնը, բնաւ չպիտի փորձեր կրկնակի ամուսնութեան մը երբ իր զաւակներուն հայրը տակաւին կենդանի է ու կ'ապրի իր բնական կեանքը:

Կարելի չէ հաւատալ թէ այսպիսի մայր մը համարձակութիւն պիտի ունենայ նայելու իր զաւակներուն աչքին մէջ մայրական իրազեկ սրբութեամբ ու գերազանց արժանապատուութեամբ երբ այդ անմեղ փոքրիկներուն ծնողքը, հայր ու մայր, երկուքն ալ տակաւին կենդանի կ'ապրին սակայն տարբեր մարդիկ ու տարբեր բնաւորութեամբ ու միջնեւ անդամ այսպիսի նկարագրի տէր ծնողքներ կարող չեն դուրգուրալ իրենց զաւակներուն վրայ այնպէս ինչպէս որ հարազատ ծնողք մը պիտի դուրգուրար:

Եթէ ամերիկեան դատարանները ամուսնաթողութեան մը առթիւ բացարձակօրէն արգիլէին ամուսնալուծուող մարդու մը երկրորդ ամուսնութիւնը հինգ տարի պայմանաժամով, այն ատեն պատուաւոր ամուսին մը ընտանեկան չնչին թերութիւններուն պատճառու երբեք դատարան չպիտի վաղէր: Օրինակ, ինչպէս տղայ մը եւ օրփորդ մը որոնք ոչինչ գիտեն մէկզմէկու նկարագրին, բնաւորութեան եւ դիրքին վրայօք, այլ փոխադարձ հաւանութիւնը ունեցած են մէկզմէկու արտաքին երեւոյթէն, հաւանաբար պարահանդէսի մը եւ կամ նուագահանդէսի մը մէջ զիրար տեսնելով, եւ երբ բնաւորութիւնին իրարու կը համապատասխանէ այն ատեն այդ ամուսնութիւնն է որ պիտի առաջնորդէ զիրենք դէպի փոխադարձ երջանկութեան ու այսպիսով կը կազմեն գեղեցիկ ընկերակցութիւն մը, ամուսնութիւն մը: Սակայն երբ անյարմար բնաւորութեամբ տարի մը վերջ եւ հաւանական է մէկ ամիս յետոյ, որը յաճախ պատահած է, անոնք այլեւս ձանձրացած մէկզմէկէ, հասկցած իրենց արամադրութիւններուն ներհակութիւնը, կռիւ ամէն օր, ամէն մէկ ժամ եւ վերջապէս կը վազեն ամերիկեան դատարան ինչպէս ըսինք կտոր մը սեւ թուղթի համար:

Ահա թէ որչափ արժէք կը ներկայացնէ ամուսնութիւնը այսպիսի նկարագրի մարդոց համար, որոնք տակաւին Գրիստոս ու քրիստոնէութիւն կը փառաբանեն մոռնալով իրենց մեղապարտ վարմունքը հանդէպ քրիստոնէական եկեղեցիին ու կրօնական պաշտամունքներուն: Ամուսնացած զոյգ մը մէկ մարմին են, եւ ինչո՞ւ անոնք չպիտի կըրնան տոկալ ու հանդուրժել այն վիշտերուն որոնք տանելի ու բնական են եւ ոչ թէ անպատուարել ինչպէս է բաժանումը ու անիծեալ ամուսնաթողութիւնը: Կեանքի դառնութեան պէտք է զիտակցել, որովհետեւ կեանք մը որ չունի իր թերի կողմերը հոն մեռած է գործօն ոյժը ու այլեւս կարիք չկայ արիւն քրտինք թափել պակաս մը լրացնելու համար: Եթէ համալսարանական հարուստ ուսանող դասակարգ մը կը ուղայ նիւթական հարստութեան ու փարթամ կեանքի զեղխութեան մէջ, անոնք այլեւս պէտք չունին մտածելու աշխարհի քաղաքակրթութեան ու մարդկային երջանկութեան վրայ որովհետեւ անոնք են աշխարհի քաղաքակրթեանըն ու երջանիկ դասակարգը?? Հետեւաբար պէտքը չկայ իրենց համար մտածելու իմաստասիրութեան, բարոյագիտութեան ու բարոյական սեփականութեան մասին ու այս դասակարգն է որ կը դառնայ աշխարհի էն տխմար եւ անբողայականութեան աղբիւրը: Սակայն թոյլ տուէք մեզի հետաքրքրուել այն աղքատ ուսանող դասակարգին որ գիշեր ու ցորեկ արիւն ու քրտինք կը թափէ, զրկուած այլ եւ այլ փարթամ ու շոտյ կեանքէ, կ'աշխատի ան կեանքին մէջ նշմարուած պակաս մը լրացնելու, կ'աշխատի ան իր ցեղին, մարդկային ընկերութեան տալու քաղցր եւ երջանիկ պատկերը, փոխանակ թերանալու մարդկութեան կտրած ճանապարհը հարթելու ազատելով մարդկային ազգը տնտեսական գեանաբար զրութենէն:

Կեանքը քաղցրացնող ազդակը բանի մը պակասն է. մարդիկ իրարու կը մօտենան, զիրար կը սիրեն մէկզմէկու պակասը լրացնելու համար, իրարու թերութիւնները մատնանշելու եւ մէկզմէկու ցաւէն բաժին առնելու համար: Հող է կեանքի զիտակցութիւնը ու քաղաքակրթութեան էն կարեւոր ազդակը: Ուրեմն ամուսնացած զոյգ մը պէտք է գիտակցի այն ճշմարտութեան թէ իրենց ամուսնութիւնը չէ եղած սոսկ զիրար սիրելու տենչէն, այլ զիրար ուղղելու, նաեւ մէկզմէկու ցաւէն քիչ մը բաժին առնելու, այդ է ամուսնութեան նպատակը ու արդիւնաբերութեան օրինա-

կան կերպը: Աշխարհի օրհնութիւններէն ամենաբարձր եւ ամենամեծը եղած է զոյգի մը ամուսնութիւնը երբ անոնք կ'ապրին միասին ու մէկ տեղ իրենց կեանքի վերջի վայրկեանին: Ըլլալ երջանիկ ամէն օր, վայելել կեանքը: սակայն շոտյ ու անհոգ կը նշանակէ չի հասկնալ կեանքի խրատներէն ու սովբեցուցած դասերէն: Չկայ կապոյտ երկինք մը որ չունենայ իր ստուերը՝ ինչպէս կոտուղ զինուորը ունի իր անձնական ցաւը ու աշխատող բազուկը իր բոլորքի ըմբոստ ձայնը:

Ինչպէս անցեալ նաեւ ներկայ քաղաքական եւ տնտեսական, գրական եւ բարոյալէտ կարգերու մէջ իսկական հանձարները, բնատուր տաղանդներ կեանքի մրուրը քամած են եւ թշուառութեան ճահիճին մէջ կորսուած, սակայն միշտ բարձր բռնելով իրենց բարոյականին արժէքը, չի նզովուելու ապագայ սերունդէն:

Բիւքըրը հոչակաւոր նկարիչը անօթութեան վերջին նոպային մէջ յիմարացաւ եւ յիմարանոց նետուեցաւ: Պէթո-վէն չարաչար աշխատանքով ոչ միայն հացը չէր կրնար ձարել, այլ զինով հայրը կը հոգար եւ Չ՛ տարեկանին խլացաւ: Հոչակաւոր անգլիացի բանաստեղծ Միլտոնը իր տիեզերահոչակ «Իրախտ Կորուսեալ»-ը իր կոյր վիճակին մէջ Չ՛ տողարի ծախեց: Այսպէս կարելի է շարել այն հսկայ բանակը որոնք եղեր են աշխարհի փառքն ու պարծանքը, տնտեսական այդ անարդ զրութեան տակ անգամ իրենց տաղանդի մեծութեամբ գիտցեր են տոկալ, համբերել ու վերջապէս ապրիլ պատուաւոր եւ անզուգական: Ու ինչո՞ւ համար միայն հասարակ մահկանացուները որոնք ամուսնութեան քօղին տակ թեթեւ պատահարներու ու պղտիկ դժբախտութիւններու պատճառաւ այլեւս տոկալ ու համբերել անկարելիութիւն կը դառնայ իրենց համար եւ գիշեր ցորեկ աղօթք կ'ընեն իրենց ամուսնաթողութեան սեւ խարանդ իրենց ճակտին կրելու, մոռնալով Պէթովէն, Մօցարտ, Շուպերթ, Միլտոն, Բիւքըրը որոնք իրենց տիեզերահոչակ համպէրթ, Միլտոն, Բիւքըրը որոնք իրենց տիեզերահոչակ համբաւով տոկալ գիտցան, կեանքի ամենադառն բաժակը խըմեցին, սակայն իրենց համար կեանքը մէկ էր ու ատով ալ պէտք էր գոհանային: Ահա դաս առնելիք դէպքեր ու նշանակելի կացութիւններ, որ մեր առաջ մտածելու եւ գործելու նոր ուղի մը կը բանայ: Ինչ որ ամ ըլլան ամուսնացած դասակարգի համոզումները, ինչ զգացում որ ունենան անոնք դէպի ամուսնութիւնը թող իրենց ընտանեկան

սուրբ դատի պայքարը շարունակեն եւ մտաբերեն այն խօսքը որ ամուսնութենէն վերջ ու առաջին որդին ծնանելէն ետք նշանաւոր անձ մը խորհրդածեց .-

«Հիմա միայն մէկ պարտականութիւն ունիմ՝ կրթել գաւազն երկիրզածութեան մէջ եւ բոլոր այն սկզբունքներուն մէջ որոնք կը խորհիմ թէ ուղիղ են, ուրիշ ոչինչ պիտի մտահոգէ զիս . այսօրունք սկսեալ ես միայն այս տունը պահողը պիտի ըլլամ»: Ու այսպէս ալ թող խորհրդածեն մեր՝ հայ ընտանիքի բոլոր դասակարգը, իրենց ցեղին ու մարդկութեան բարոյականին սիրոյն:

Բ.

ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՄԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ ՍՈՎԻԵԹ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Ինչպէս որ բուրժուական եւ աւատական դասակարգերու մէջ կոխն ծագեց եւ առաջ եկաւ ներկայ կապիտալիստական կարգերը, նաեւ այսօրուայ կոմմիւնիստական կարգերը ի արդիւնք դասակարգային սուր կոխին, եւ միանգամայն արտայայտութիւն Ռուս Կարմիր Յեղափոխութեան կողմէն յաջորդելու կապիտալիստական կեղեքիչ կարգերուն: Այս ՅԱՋՈՐԴՄԱՆ, աւելի ճիշդը կոմմիւնիստական կարգերը հասարակութեան պատմական էՎՈՂԻՅՅՄԱՅԻՆ կապիտալիստականը կը վերածուի սօցիալիստականի եւ կեանքը կը դրուի ներդաշնակութեան եւ համերաշխ համագործակցութեան հողի վրայ:

Ռուս պրոլետարական կառավարութիւնը մարքսիստական Սօցիալիզմի, Կոմմիւնիզմի ներքին տրամասութեամբ կը յայտնուի գերազանցապէս յեղափոխական, թէեւ հոն հաստատուած բոլոր քաղաքային եւ տնտեսական, ընկերային եւ ընտանեկան օրէնքները իրենց հաւաքականութեամբ կատարեալ կոմմիւնիզմը չեն մարմնացներ, բայց հոն օրէ օր նորութիւն մը կ'աւելնայ եւ հինէն բան մը կը պակսի, այս ձեւով երբ համաշխարհային յեղափոխութիւնը կը յաջորդէ Ռուս Կարմիր Յեղափոխութեան այն ժամանակ կը տապալուի հինը իր նշանակամբ եւ կը հաստատուի նորը կոմմիւնիստ աշխարհին մէջ:

Եւ որովհետեւ Ռուս պրոլետարական կառավարութիւնը իր յեղափոխական կեանքով դէպի կոմմիւնիզմ յառաջացող շարժում մըն է, հետեւաբար իր բոլոր քաղաքային եւ տնտեսական, ընկերային եւ ընտանեկան, ինչպիսին է ամուսնութեան եւ ամուսնալուծման օրէնքներուն մէջ տակաւին կը նշմարուի հին օրէնքներու հետքը, որովհետեւ յեղափոխական կարգերուն տակ ապրող այն սերունդը որ վարժուած է ընտանեկան հին օրէնքին մէկ անգամից կարելի չէ անոնց մէջ ներմուծել նորը, նորը կարելի է մատակարարել նոր եւ գալիք սերունդին որոնք Մարքսիստական Սօցիալիզմին, Կոմմիւնիզմին հարազատ գաւազներն են:

Ռուս բանւորները իրենց արեան գնով ոչ միայն տապալեցին կապիտալիզմը, այլ նաեւ ջնջեցին ու պիտի ջնջեն աւատապետական բոլոր օրէնքներն ու սովորութիւնները, որոնք կը պաշտուէին ցարիզմի ժամանակ: Ներկայ Սովիետ Ռուսաստանի եւ բոլոր Սովիետ Հանրապետութիւններու ամուսնութեան օրէնքները ամենայնպէս յեղափոխական եւ ամենասօցիալիստական մշակութ մըն է դէպքերուն եւ հանգամանքներուն յարմարցնելու համար:

Սովիետ Ռուսաստանի մէջ ներկայ ամուսնութիւնը հիմնւած է միայն քաղաքական օրէնքի վրայ, բայց այդ օրէնքը եւ կամ օրինագիրքը ոչ մի ժամանակ արդելք կ'ըլլայ անոնց իրաւունքին որոնք կ'ուզեն ամուսնանալ կրօնական արարողութեամբ, թէեւ զուտ կրօնական ամուսնութիւնը կորնցուցած է իր օրինական նշանակութիւնը եւ պարտադրութիւնը: Արդի լաւատեսուած օրէնքը աւելի առաջ գացած, միանգամ ընդմիջա ջնջած է բոլոր աւատապետական արգելքները ամուսնութեան համար, ինչպէս հաւատքի եւ ուրիշ կրօնական տարրերութիւնները որոնք ստիպողական էին ըստ հին ուժիմի ստեն:

Ներկայ օրէնքը ստեղծած է բացարձակ հաւասար իրաւունք էրիկ եւ կին մարդոց միջեւ, որը միակ միջոցն է հող տալ նոյն իսկ կնոջ ուսումնասիրելու եւ ինքզինքը յարմարցնելու Սօցիալիստական օրէնքներուն: Ամուսնութեան եւ ամուսնալուծման օրէնքին մէջ էրիկ եւ կին հաւասար իրաւունք եւ միաժամանակ պարտք ունին հանդէպ իրենց զուակներուն: Նոյն իսկ տարրերութիւն մը չկայ օրինաւոր ամուսնացած ծնողքի եւ ոչ-օրինաւոր ամուսնացողներու գաւազներուն մէջ: Այն զաւակը որ ծնած է առանց օրի-

նաև որ ամուսնութեան ունի այնչափ իրաւունք որչափ որ օրինաւոր ամուսնութեանը :

Կայ մի ուրիշ օրինական փոփոխութիւն, որ կինը ըստ հին ցարիզմի օրէնքին որպէս գերի կը հետեւէր իր էրկան, սակայն այդ օրէնքը մեռած է, եւ երբ անոնցմէ ոեւէ մէկը զ'ուղէ բնակավայրը փոխել՝ միւսը պարտադիր չէ անոր հետեւիլ, այլ անոնք կրնան ապրիլ որպէս օրինաւոր էրիկ եւ կին մինչեւ իսկ տարբեր միջավայրի եւ կամ իրարմէ անջատ ապրելով իսկ :

Ընտանեկան յարաբերութեան օրէնքը ամէն տեսակով մասնաւոր սեւադրութիւն կը դարձնէ զաւակներու անձնական եւ տնտեսական իրաւունքներու պաշտպանութեան : Մնողքը, հայրը եւ մայր, պարտական են պահելու իրենց զաւակները, պաշտպանել անոնց անձնական շահերը եւ տընտեսական իրաւունքները, նաեւ պատասխանատու են անոնց հոգատարութեան ինչպէս նաեւ բարոյական դաստիարակման : Հակառակ պարագային, երբ այդ անմեղ զաւակները ապրջանիկ դոճ կը դառնան իրենց ծնողքի անհամաձայնութեանց՝ այն ժամանակ տեղական դատարանները պատրաստ են պաշտպանելու այդպիսի զաւակներու իրաւունքը եւ անոնք այլեւս չեն պատկանիր իրենց ծնողքին, այլ կառավարութեան :

Կրօնական հաւատքի եւ պաշտամունքի խնդիրը Սովիեթ Ռուսաստանի մէջ տակաւին մութ է մնացեր շատերու մըտքին մէջ : Ինչպիսին, եթէ հայր եւ մայր միասնաբար համաձայն են անոնք կրնան որոշել թէ ինչ կրօնական հաւատքի պէտք է դաւանին իրենց զաւակները որոնք 14 տարեկանէն վար են, բայց երբ անհամաձայն գտնուին՝ այդ պարագային իրենց զաւակները պէտք չէ ոեւէ մի կրօնքի դաւանին՝ մինչեւ որ անոնք մեծանն եւ իրենք իրենց հասկացողութեամբ որոշեն թէ ո՞ր կրօնքի դաւանելու եւ կամ հաւատօք իրենց համար աւելի լաւ եւ նախընտրելի է : Իսկ երբ հայր եւ մայր իրարմէ հ'եռի կապրին եւ չեն կրնար համաձայնիլ թէ ո՞ր մէկը պէտք է ինամէ եւ կամ դաստիարակէ իրենց զաւակներու այդ պարագան եւ կամ կ'ընտոտ խնդիրը լուծում կ'ստանայ տեղական դատարանի վճիռով :

Մնողք մը լիազօրութեամբ չէ պայմանադրութիւն կնքել իր զաւակները գործի յծելու համար առանց հաւանութեան երբ անոնք 16-18 տարիքին մէջ են, իսկ 16 տարեկանէն վար

զաւակներուն գործելը բացարձակապէս արգելուած է, անոնց գործը պէտք է ըլլայ կրթական եւ մտային դաստիարակման աշխատութիւն Սովիեթ դպրոցներու մէջ : Մնողք մը պարտի հսկել իր զաւակներու անձնական շահերուն ու երբ այդ շահեկան պարտականութիւնը զանց կ'ըլլայ, այն առեն տեղական դատարանը իրաւունք ունի զրկելու զանոնք (ծնողքը) իրենց ծնողական իրաւունքէն : Մինչեւ իսկ երբ ծնողքը կը թերանայ իշխելու իր զաւակներու անձնական շահերուն՝ կառավարական որեւէ ներկայացուցիչ եւ կամ ոեւէ մէկ քաղաքացի իրաւունքի մէջ է դատ բանալ այդ անպարտաճանաչ ծնողքին դէմ, եւ զրկել զայն իր ծնողական իրաւունքէն, բայց այդ ծնողական իրաւունքի կորուստով միասին դարձեալ ծնողքը ունի որոշ պարտականութիւն հանդէպ իր զաւակներուն :

Մնողքը իրաւունք չունի տիրանալ իր զաւակի կալուածին եւ ոչ ալ զաւակը իր ծնողքին, այդ ժառանգի իրաւունքը, օրինական եւ կամ կտակի սովորութիւններով բացարձակապէս ջնջուած է Սովիեթ Ռուս Կենտրոնական Վարիչ Մարմնի կողմէ Ապրիլ 27, 1918-ին : Բայց տակաւին կայ առժամանակեայ օրէնք մը որ եթէ մեռած մարդուն զաւակները եւ կամ մեռածին ծնողքը՝ որոնք անկարող են գործելու իրենց տնտեսական ապրուստին համար, այն առեն այդ մեռած մարդուն ձգած կալուածէն մէկ մասը միայն կարելի է տրամադրել անոնց, իսկ մնացած ամբողջութիւնը կ'երթայ կառավարութեան : Այս առժամանակեայ օրէնքը կը ջնջուի այն առեն միայն երբ այլեւս աշխատութեան անկարող մարդոց տնտեսական ապրուստը կ'ապահովուի կառավարութեան կողմէ :

Գիտական Սօցիալիզմի քաղաքային եւ ընտանեկան յարաբերութեանց օրէնքները ուսումնասիրելու համար պէտք է աչքի առաջ ունենալ քաղաքային եւ ընտանեկան յարաբերութեանց արձանագրութիւններու ձեւերը՝ իրենց զըլլաւոր բաժանումներով եւ ստորաբաժանումներով, բայց մենք պիտի անցնինք Սովիեթ Ռուսիոյ այն օրէնքներու դասաւորման՝ եթէ ոչ շատ համառօտ բայց ամփոփ եւ միաժամանակ ամենակարեւոր բաժանումներուն որոնց պէտք է գիտակցի կոմմիւնիստական հողի վրայ գործող ամէն մի բանւոր եւ կոմմիւնիստիզմի անունով խօսող ամէն մի գործիչ :

Ա. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՁԵՒԵՐԸ

Կենսական վիճակագրութեանց տեղային Պիւրօները պէտք է պահեն իրենց հետեւեալ արձանագրութիւնները .

1. Արձանագրութիւն ծնողներու .— Ծնունդի մը արձանագրութիւնը պէտք է ըլլայ երեք օրուան մէջ, այսինքն ծնած օրէն հաշուելով մինչեւ երրորդ օրը : Այդ արձանագրութիւնը կ'ըլլայ հօր, մօր եւ երկու վիաներու ստորագրութեամբ :

2. Արձանագրութիւն մահերու .— Մահուան մը արձանագրութիւնը նոյնպէս ըլլալու է երեք օրուան մէջ, հաշուելով մեռած օրէն մինչեւ երրորդ օրը : Այդ արձանագրութիւնը պէտք է պարունակէ մեռած մարդուն անունը, մահանունը, ծնունդի թուականը եւ վերջի բնակավայրը, մեռած տարին, ամիսը եւ օրը եւ մահուան պատճառը :

3. Արձանագրութիւն բացակայողներու .— Պէտք է արձանագրութիւն բոլոր անոնք որոնք կ'ուզեն բացակայիլ երկրէն եւ նոյնպէս անոնք որոնք նոր կը հաստատուին այդ երկրին մէջ :

4. Արձանագրութիւն ամուսնութեանց :

5. Արձանագրութիւն Ամուսնաթողութեանց :

6. Արձանագրութիւն տակաին չը ծնած զաւակներու ծնողական անստուգութեանց աղերսագիրներու :

7. Արձանագրութիւն այբուբէնական կարգով՝ այն անձերու որոնք փոխած են իրենց ժառանգած կամ շահած անունները եւ կամ մականունները :

Ամուսնութեան եւ ամուսնաթողութեանց արձանագրութիւնները, ինչպէս նաեւ օրէնքները հետեւեալ կերպով կը մատակարարուին :

Բ. ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆՑ ՁԵՒԵՐԸ

Կենսական վիճակագրութեանց Պիւրօի արձանագրած քաղաքական ամուսնութիւնը միայն կրնայ ստեղծել պարտքի եւ իրաւունքի բաժանումը էրիկ եւ կնոջ միջեւ : Կրօնական արարողութեամբ կատարուած ամուսնութիւն մը ո՛չ միայն կատարեալ եւ կամ օրինական չէ, այլ այդ կրօնական ամուսնութիւնը օրինական ոչ մի պարտք եւ իրաւունք

կ'ստեղծէ եւ կամ կ'ստիպէ կրօնական արարողութեամբ ամուսնացողներու միջեւ, քանի այդ ամուսնութիւնը չարձանագրուի ըստ օրէնքին :

Եկեղեցական եւ կրօնական ամուսնութիւնները պայմանագրուած Դեկտ. 20, 1917 թուականէն առաջ պիտի նկատուին օրինաւոր . . . :

Օտար հողի վրայ եղած ամուսնութիւնները պէտք է ըլլան այդ հողին մէջ գտնուող Ռուս ներկայացուցիչի մը լիազօրութեամբ եւ նոյնութեամբ տեղեկացնել կենսական վիճակագրութեանց Պիւրօին :

Ամուսնութիւնները պէտք է պայմանագրուին այն հրապարակային շէնքին կամ շէնքերուն մէջ որոնք այդ նպատակին են յատկացուած :

Ամուսնութիւնները պէտք է պայմանագրուին կենսական վիճակագրութեանց պիւրօի պետին եւ կամ իր փոխանորդին ներկայութեամբ, իսկ նօտարական (notarial) բաժանմունքներուն մէջ նօտարին եւ կամ իր քարտուղարի ներկայութեամբ :

ՈՐՈ՞ՆՔ ԿՐՆԱՆ ԱՄՈՒՍՆԱՆԱԼ

Այն անձերը որոնք կ'ուզեն ամուսնանալ՝ պէտք է ամուսնական տարիքը հասած ըլլան : Ամուսնական տարիքն է 16 տարեկան իգականներուն համար, իսկ 18՝ արականներուն :

Անոնք որոնք կ'ուզեն ամուսնանալ, պէտք է ողջամիտ ըլլան : Ոչ ոք կարող է պայմանագրուիլ նոր ամուսնութեան մը համար որ տակաւին ան կ'ապրի արձանագրուած ամուսնութեան մը վիճակին մէջ, կամ տակաւին ոչ արձանագրուած՝ բայց արձանագրուած ամուսնութեան մը արժէքը կը ներկայացնէ :

Ամուսնութիւնը արգիլուած է բոլոր համարին ազգականներու միջեւ որոնք կը ներկայանան ուղիղ գծի վրայ՝ եղբոր կամ կէս-եղբոր եւ քոյրերու միջեւ :

Ամուսնութիւն մը պէտք է ըլլայ ամուսնացողներու երկուստեք հաւանութեամբ :

Կրօնական տարբերութիւնը արգելք մը չպէտք է նկատել ամուսնական պայմանագրութեան : Միանձնական աստիճանը, քահանայութիւնը կամ սարկաւազութիւնը նոյնպէս արգելք մը չի նկատուիր ամուսնական պայմանագրութեան :

ԱՆՎԱԻԵՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ամուսնութիւն մը անվաւեր է միայն այն ատեն, երբ օրէնքը իր վերջին վճիռը կուտայ այդ ամուսնութեան անվաւեր ըլլալուն:

Ամուսնութիւն մը լուծելու համար գործողութիւնը (action) կարելի է բերուիլ էրկան կամ կնոջ կողմէ, եւ կամ այն մարդոց կողմէ որոնց շահը կը պահանջէ եւ կամ նոյն իսկ կառավարական ներկայացուցիչներու կողմէ:

Ամուսնութիւն մը կարելի է անվաւեր նկատուիլ երբ ամուսնացած զոյգը եւ կամ անոնցմէ ուրիշ մէկը տակաւին ամուսնական տարիքին չէ հասած, իսկ եթէ ամուսնութեան մէջ վերջ ծնունդ տեղի է ունեցած, այլեւ տարիքի փութութիւնը նկատի չառնուիր:

Ամուսնութիւն մը անվաւեր է երբ պայմանագրուողներէն երկուքն եւ կամ իսկ մէկը խելագար է:

Ամուսնութիւն մը անվաւեր է երբ ամուսնացած զոյգի հաւանութեամբ չէ եղած:

Այն զոյգին ամուսնութիւնը որ անվաւեր կը ճանչցուի պաշտօնական կերպով անոնք կրնան կրկին ամուսնանալ:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՄ

Ամուսնութիւն մը լուծուած է ամուսնացած զոյգին ուրիշ մէկին մահով՝ երբ դատարանի միջոցաւ հաստատուի այդ մահը:

Ամուսնաթողութեան համար ամուսնացած զոյգի երկուստեք հաւանութեամբ եւ կամ ուրիշ մէկի բաղձանքին համաձայն՝ ամուսնալուծման արդարագիրը կարելի է ներկայացնել Կենսական վիճակադրութեան Պիւրօի պետին, եւ երբ գոհացուցիչ կը նկատուի, այն ատեն ամուսնաթողութեան վկայագիրը կը տրուի ամուսնաթողներուն:

Ամուսնաթողութեան դատավարութիւնը պէտք է վարէ տեղային դատաւորը հանրութեան առջեւ:

Ամէն մէկ տեղային դատաւոր մասնաւոր ժամեր պէտք է որոշէ, առնուազն շարաթր անգամ մը, ամուսնաթողութեան դատերու համար:

Երբ դատաւորը արդարացի կը գտնէ ամուսնալուծման

փաստերը, այն ատեն իր արձակած վճիռէն երեք օր վերջը պէտք է ամուսնաթողութեան վկայագիրը յանձնուի ամուսնաթողներուն:

ԱՄՈՒՍՆԱՅԱԾ ԶՈՅԳԻՆ

ՊԱՐՏՔԻ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԶՍՓԱՆԻՇԸ

Ամուսնացած զոյգը, էրիկ եւ կին, միասնաբար պէտք է կրեն հասարակ մականունն մը (ամուսնական մականունն): Ամուսնութեան ատեն անոնք պէտք է համաձայնին թէ էրկան եւ կամ կնոջ մականունը եւ կամ երկուքի մականունները միասին պէտք է գործածել ամուսնութենէ վերջ:

Էրիկ եւ կին կրնան զատ զատ պայմանագրութիւններ կնքել: Եթէ այդ պայմանագրութիւնը եղած է էրկան կողմէ՝ կինը պատասխանատու չէ, իսկ եթէ կնոջ՝ այն ժամանակ էրիկը պատասխանատու չէ: Եթէ անոնցմէ մէկը անկարող է գործելու եւ կամ պէտքի մը առջեւ կը գտնուի՝ միւսը պարտական է օգնելու՝ պայմանաւ որ այս վերջինը օգնելու կարողութիւնը, ի վիճակի ըլլայ, իսկ եթէ ի վիճակի է ու չուզեր օգնել, այս պարագան կը ներկայացուի Ընկերային Ատեանին եւ հոն կ'ստանայ իր վերջին լուծումը:

Էրիկ մարդ մը 55 տարիքին մէջ, իսկ կինը 50՝ գործելու անկարող կը նկատուին: Այս օրէնքը ընկերային խնամատարութեան օրէնք մըն է եւ ունի իր ստորարտօնութեանը, թէ ի՞նչպէս եւ ինչո՞վ կարելի է խնամել այդ գործելու անկարող անձինքը: Պէտք է խնամել նաեւ այն անհատ քաղաքացին որուն էրիկը եւ կամ կինը բացակայ է եւ ան անկարող է գործելու ու խնամքի պէտքն կ'զգայ:

ՍԵՐՈՒՆԴ

Սերունդի արտադրումը պէտք է ըլլայ ընտանեկան կազմի մը հիմքը: Ուրիշ տարրերութիւն չկայ օրինական եւ ոչ օրինական ամուսնութեանց արտադրած սերունդներուն միջեւ: Ամուսնացած ծնողքէ մը սեռած զաւակը օրինաւոր ամուսնացած ծնողքի մը զաւակին չափ իրաւունք ունի:

Այն անձերը որ կ'արձանագրուին «Մննդեան Արձանագրութեան» մէջ որպէս ծնողք՝ անոնք այդ զաւակին հայրը

և և մայրը կը նկատուին: Բայց երբ դատարանի վերաքննութեամբ հաստատուի որ այդ «Ծննդեան Արձանագրութեան» մէջ գաւակին որպէս ծնողք արձանագրուողներուն ներկայացուցչութիւնը կեղծ է, անոնք պատասխանատու են և զեռնակեան յանցանքի մը դատաւարութեան, իսկ այդ կեղծ արձանագրութիւնը կը նկատուի անվաւեր:

Չամուսնացած կին մը երբ յղի է՝ ան իր գաւակին ծրնունդէն երեք ամիս առաջ պարտի այդ պարագան տեղեկացնել Կենսական Վիճակագրութեան Տեղային Պիւրօն, տարով իր բնակավայրը, նոյնպէս կարծաւոր հօր անունը և անոր բնակավայրը: Նոյն ձևի տեղեկագրութիւն մը պէտք է ներկայացուի ամուսնացած կնոջ մը կողմէ՝ երբ տակաւին չը ծնած գաւակին հայրը իր էրիկը չէ, այլ ուրիշ մը:

Կենսական Վիճակագրութեանց Պիւրօն սոյն տեղեկագիրը ստանալէն վերջ պէտք է տեղեկացնէ այդ պարագան նաև այն մարդուն, որ աղերսագրին մէջ նշանակուած է որպէս այդ չը ծնած գաւակին հայրը և այս մարդը (ամբաստանեալ) պարտի երկու շաբաթէն ղեմել զատարան այդ աղերսագրին կեղծ ներկայացման համար, իսկ եթէ ան թերանայ այդ երկու շաբաթամիջոցին ներկայանալ դատարանին իր ամբաստանութեան համար, այդ պարագային ան կը նկատուի այդ տակաւին չը ծնած գաւակին հայրը, և դատարանը կը պարտագրէ անոր բաժնեկից ըլլալու այդ գաւակին համար եղած բոլոր հոգատարութեանց:

Իսկ եթէ տեղային դատարանը հաստատէ, որ էրիկ մարդ մը տակաւին ամուսնացած չէ կնոջ մը հետ ու ամուսնական հարցազնուցութիւն է ունեցած այդ կնոջ հետ և կինը նախ քան իր գաւակի ծնունդը՝ ամուսնական հարցազնուցութիւն է ունեցած նաև ուրիշ մարդոց հետ, այդ պարագային դատարանը ամբաստանութեան տակ կ'առնէ այդ բոլոր մարդոց և կը պարտագրէ զանոնք հաւասար բաժնեկից ըլլալ գաւակի հոգատարութեան:

Տղայ գաւակը իր 18 տարեքէն վար ենթակայ է ծնողական իշխանութեան և գոհացուցիչ խնամքի, իսկ աղջիկ գաւակը 16: Իսկ եթէ ծնողքը թերանայ խնամել և դատարանը կը գաւակը, դատարանը իր իրաւունքի սահմանին մէջ է զրկելու գաւակին ծնողքը իր ծնողական իրաւունքներէն:

Ծնողք մը պարտի խնամել, հոգ տանիլ իր գաւակին երբ

ան տակաւին տարիքի չէ եկած, նոյնպէս գաւակը պարտի խնամել, հոգ տանիլ իր ծնողքին երբ անոնք ծեր են անկարող գործելու: Տղայ մը 13 տարեկանին արդարութեան վաղագացում մը կրնայ զգալ և կրնայ պարտականութեան հրամանին անսալու հակամէտ ըլլալ: Տղու մը բանականութիւնը կարելի է զարգացնել անոր մէջ ներմուծելով խոհական և անկեղծ համոզումներու պէտքը: Մաքուր զգացումներով պատրաստուած սերունդ մը ապագային զարդն է: Մաքուր զգացմունքները կ'արթննան ընկերային մաքուր բարոյագիտութենէն:

Սովիեթ Ռուսաստանի, ինչպէս նաև միւս Սովիեթ երկիրներու մէջ ընկերային բարենորոգումը սկսած է շնորհիւ քաղաքական և տնտեսական իրաւակարգերու փոփոխման: Ընկերային օրինադիրքը չափաւորապէս բարեփոխուած է, մարդկայնական նոր օրէնքներ հրատարակուած, բայց այդ օրէնքները գործադրելու համար՝ անոնց ենթարկելու ընդունակ քաղաքացիներ պէտք է պատրաստել, եթէ ոչ այդ նոր օրէնքները չարիքը տեղափոխելէն և գուցէ ծանցնելէ զատ ուրիշ բանի չպիտի ծառայեն: Հո՛ն ուր կը տիրէ Սօցիալիզմը, պէտք է որ սօցիալիստ երկրի քաղաքացիները հասկնան սօցիալիզմը և դառնան սօցիալիստներ: Այսպիսով մարդկութիւնը կը յառաջադիմէ, հիմին տեղ նորը կը հաստատուի օրէ օր, ժամէ, ժամ: Կապիտալիզմը կը մեռնի, սօցիալիզմը կ'իրականանայ, մարմին կը դառնայ մարդկային բոլոր ՍԹՐԱԹԱՆՆԵՐՈՒՆ մէջ: Գիտական Սօցիալիզմով տոգորուցներու գգացմունքները լնի ալիքներու մեման սկսել են տարածուիլ մեր անձէն դէպի մեր ընտանիքը, մեր ազգը, և վերջապէս՝ դէպի ամբողջ մարդկութիւնը:


(ՎԵՐՁ)



<< Ազգային գրադարան



NL0217649



ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ամուսնութիւն եւ Ամուսնալուծում	\$.35
Սնափառութիւնը Սիրահարների Աշ- խարհին մէջ	.75
Տիգրան Առաջին, Թագաւոր Հայոց (Թատերգութիւն)	1.00
Ոնրագործին Սէրը	.25

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ ԵՆ

Թատերական Արուեստ
Դարերուն Դժոխքը
Ի՞նչպէս Կարելի է Հրապարակախօս մը Դառնալ
Արտաշէս եւ Սաքեռիկ (Թատերգութիւն)
Արիւն եւ Սէր (Տրամ-Օբէրէթ)

